ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

N 17/17.4/5134-2024 «09» 02 2024թ.

«ՄԻՌՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ ՏԻԳՐԱՆ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ
(*Հասցե՝ ՀՀ, ք.Վանաձոր, Բանակի 32*)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Վարչապետի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) 2023թ. կարիքների համար մետաղի դետեկտորների ձեռքբերման նպատակով՝ աշխատակազմի և «ՄԻՌՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 26.10.2023թ. կնքվել է N ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/68-1 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 8 760 000.00 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

Պայմանագրի 1.1-ին կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.2 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի, եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝ չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է

պայմանագիրը: Վաճառողի կողմից խախտումն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Պայմանագրի N 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագրի համաձայն ապրանքի մատակարարումը, տեղադրումը և կարգաբերումը պետք է իրականացվեր Ընկերության կողմից՝ վերջինիս հաշվին և միջոցներով: Սակայն, Ընկերության կողմից Պայմանագրով սահմանված ժամկետում չի իրականացվել համակարգի կարգաբերումները և գործարկումը, ինչի արդյունքում Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից տրվել է բացասական եզրակացություն և պայմանագրի արդյունքը աշխատակազմի կողմից չի ընդունվել: Հիմք ընդունելով պայմանագրի 2.1.2 կետի «բ» ենթակետը՝ վարչապետի աշխատակազմն առաջարկել է Ընկերությանը մինչև 2024թ. հունվարի 10-ը վերացնել արձանագրված թերությունները, ինչը սակայն վերջինիս կողմից չի կատարվել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ փաստացի չիրականացնելով պայմանագրով նախատեսված ապրանքի տեղադրումը և կարգաբերումը՝ վարչապետի աշխատակազմը հիմք ընդունելով վերը նշված իրավանորմերը, միակողմանի հրաժարվում է 26.10.2023թ. Ընկերության հետ կնքված «ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/68-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրից՝ համարելով այն ամբողջությամբ լուծված:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Ընդ որում, «ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/68» ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.15 կետի համաձայն՝

- Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը ընտրված մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը լիազորված մարմինը հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում, սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ

հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

- Եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Տեղեկացնում ենք նաև, որ Ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական «900005028106» հաշվեհամարին վճարել տույժ՝ պայմանագրի գնի 0.05 %-ի չափով՝ 87 600 ՀՀ դրամ, որպես պայմանագրի կատարման ապահովում՝ ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական «900005000758» հաշվեհամարին ենթակա է գանձման 1 060 000 ՀՀ դրամ, որպես որակավորման ապահովում՝ ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական «900008000664» հաշվեհամարին ենթակա է գանձման 1 590 000 ՀՀ դրամ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական հաշվեհամարներին փոխանցելու համար:

Միաժամանակ հայտնում եմ, որ սույն ծանուցմամբ պատվիրատուն ապահովել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված պահանջի կատարումը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ